

# ՄԱՅՍԻ ԿԱՆՈՒՆՈՒՄ



ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

Բաժնետիրացիին 10 ժր. սարեխախ

Հասցի՝

Réd. du jour. „VERADZNOU'TIOUN“ - Roustchouk

Ред. на в. „ВЕРАДЗНУТІОНЪ“ - Русе

## ԲՈՒՐՈՒՄԻՆԻ ԵՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏ

### ԲՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

#### IV.

Մի հսկայական ուժգնություններ էր, որ վերջին տասնամյակում միմեանց ետևից, Ռուսաստանի զանազան կողմերում, պայթեցան բանտարան գործադուլները։ Պրոլետարիատի ներքնապես աճած ու զորացած ոյժերը, երկար ժամանակ գտնվելով զսպարած ու խեղդում վիճակում, այժմ կուտակվելով՝ յանկարծ դուրս էին պայթում և խորտակում իրանց ազատ զարգացման արգելքները։ Հակառակ կառավարությունների նրա յոթնամյա օրենքներին, ամեն ճշմարտություն, ամեն կամայականություն բանտարանի շարժումներն աճում ու տարածում էին ծախսով ու խարսխումը, նրանց հոսանքը հեղեղում էր ինքուստիական կենտրոնները, և գործադուլները յաջարկում էին գործադուլներին, ցոյցերը՝ ցոյցերին — և բանտարան ընդհանրումները զօրքերի ու ստիկանությունների հետ միջոտ աւարտ չէին ստանում բռնություն զէնքի յաղթանակով։

Դուրս բղխելով բանտարանի տնտեսական պահանջների ազդերից, այդ գործադուլները, Ռուսաստանի հենց դէպքատական ընթացիկ շնորհով, անվերջ ընդունում էին քաղաքական կերպարանք։ Ամեն անգամ անտեսական պահանջների շարքին առաջագրում էին քաղաքական պահանջներ, կամ, առելի ճիշդ, արձակում էր քաղաքական մի կոչ ընդդէմ ցարիզմի, յանուն ռամկավարական սահմանադրության ու սոցիալիզմի։ Այդպիսով պրոլետարիատն իր գործադուլներով Ռուսաստանում ամեն անգամ, երևան գալով հրապարակ իր տնտեսական անմիջական պահանջների համար, բնցնում էր միաժամանակ նաև քաղաքական կուրի հրապարակի վրայ։ Եւ մինչդեռ բուրժուազիան, իբրև դասակարգ, առելի և առելի խորատուգել էր բիւրօկրատական ծառայականությունների մէջ,

պրոլետարիատն, իբրև դաս, կարգ, դրաւում է նրա քաղաքական գործունէութեան ասպարէզը, առաջ է դալիս պատմական կրկնակի մեծ միասնայով — ցարիզմի տապալման և սոցիալիզմի վերջնական յաղթանակի գործով։ Պրոլետարիատն, այդպէս, յայտնեցաւ երկրի միակ տարրը, միակ հասարակական ամփոփ ոյժը, միակ դասակարգը, որ կանգնած է ցարիզմի դէմ իբրև յեղափոխական մասնաշին մի զուրկութիւն։ Կրող սոցիալիստական գաղափարի, նա կրողն է նաև Ռուսաստանի քաղաքական ազատութիւնների ամեն յոյսերի մարտնչելով յանուն մէկի, նա մարտնչում է միաժամանակ և միւսի համար։

Ի այն անցնենք առելի առաջ։ Պրոլետարիատն այսօր միակ քաղաքական կարևորագուծ կուսակցութիւնն է Ռուսաստանում։ Իբրև այդպիսի նա ներկայանում է անձին Ռուսաստանի Սոցիալ-Դէմոկրատական Բանտարանի կուսակցութեան։ Ձարգացնելով պրոլետարիատի դասակարգային գիտակցութիւնը, կազմակերպելով մէկ և ընդհանուր քաղաքական մարմնի մէջ նրա գիտակցական ոյժերը և առաջնորդ կանգնած նրան ամեն կուսակցութեան և ամեն շարժումներում, այդ կուսակցութիւնը, յանուն պրոլետարիատի և ինքն էլ նրա ծնունդ, իր վերայ է առել քաղաքական ու սոցիալական յեղափոխութեան կուրի միասնան ու գործադուլները։ Այսպէս, պրոլետարիատը, իր առաւելագուծ զարգացած ու գիտակցական մասով, չէ ներկայանում անկազմ մի խառնիճազան, այլ մտնելով այդ կուսակցութեան շարքերը, նա կազմակերպում է և զեկավարում մշակած Ծրագրով և կազմակերպական որոշ օրենքներով, որով և իր շարժումների ու գործունէութեան վրայ առելի և առելի դնում համատարածութեան և մէկ ընդհանուր նախագծի գործը։

Այդքանն էլ, սակայն, այն բոլորը չէ, ինչ որ կատարել է և շարունակում է կատարել Ռու-

սաստանի պրոլետարիատի զարգացած մասը։

Մղած իրանց բանտարան գրութեամբ, դէպի միմեանց հարկով իրանց տնտեսական քաղաքական ինտերէսների միակերպութեամբ, ընդհանուր կուրի մէջ գործատէրերի դէմ և ընդհանուր գործադուլների մէջ մի և նոյն տնտեսական անմիջական պահանջների համար, Ռուսաստանի ամեն կողմերում քոչոր ապագութիւնների պրոլետարները միասնում են ևւ անցնում մի և նոյն կուրի աւարտէք։ Եւ մեր առաջ բացում է այդ սքանչելի տեսարանը. այգերի եղբայրութիւնը, որ ներշնչւած մի և նոյն պաղափարով, մի և նոյն ձգտումով, մի և նոյն պատմական դերով, կատարում է պրոլետարիատի ծոցում, սոցիալիզմի դրոշի տակ, Ատելութիւնը, որը, լինամանանքը, հակառակութիւնը, իրար քնասելը, իրար քայքայելը — այդ բոլոր կրքերը, որ դեռ եւ ուում ու փրփրում են ազգերի մէջ դէպի միմեանց և որ այնպիսի ոճրագործ ջանքով հրահրում ու արծարծում են տիրող դասակարգերի ու ցարիզմի կողմից, այդ բոլոր կրքերը չքանում և անհետանում են առաջ ազգութիւնների պրոլետարների եղբայրութեան գաղափարի առաջ, ինչպէս աւաւտեան մառախուղը ծագող արևի առաջ։ Հայ բանտար, վրացի բանտար, պարսիկ բանտար, իրանց մէջ մէկ և ընդհանուր գործ շինելով պրոլետարիատի մեծ գործը, կուրի կասեան հսկայ լեռնաշղթայի գլուխով միացման ձեռք են մեկնում ռուս բանտարին, լիհ բանտարին, հրէայ բանտարին, ֆինլանտացի բանտարին։ Նրանք պրոլետարներ են, այսինքն մի և նոյն հասարակական պայմաններով կապւած և մի և նոյն դասարգը կազմող անդամներ մարդկութեան մէջ — նրանք եղբայրներ են։ Նրանք պրոլետարներ են, այսինքն մի և նոյն գերդաստան և մի և նոյն քաղաքական ու սոցիալական ձգտումներով համակուրկութեան, որ գտնւում է մէկ

և ընդհանուր բռնապետութեան ընթացիկ տակ և դէմ դրան, մէկ և ընդհանուր քաղաքական ստրկութեան տակ և դէմ դրան — նրանք եղբայրներ են։ Եւ այդ եղբայրութիւնը պատշտական չէ. նա ստղւած ու կապւած է ա՛յն քրտինքով, որ նրանք միասին լծափում են գործավայրերում, ա՛յն արիւնով, որ նրանք միասին յօղում են գործադուլներում և վերջապէս ա՛յն մեծ իդէալով, սոցիալիզմով, որի լոյսի տակ նրանք կազմակերպւում են մի և նոյն կազմակերպութեան մէջ և գործում են մի և նոյն ասպարէզում, մէկ և ընդհանուր ոգով և համերաշխ ու առաջխաղաց ընթացքով դէպի յաղթանակ։

Ռուսաստանի քաղաքական ազատագրութիւնը դարձել է գործը միայն կազմակերպւած պրոլետարիատի, որպէս արդէն նրա պատմական կոչումն է սոցիալական յեղափոխութեան գործը։ Նրանն է ներդաշնակ գործունէութեան ասպարէզը քաղաքական ու տնտեսական հոյի վրայ։ Կազմակերպւած պրոլետարիատի դերն է ցարիզմի տապալման և ռամկավարական ընդարձակ պահմանագրութեան հաստատման գործը։ Որովհետև նա է, պրոլետարիատն է, միակ յեղափոխական դասակարգը, նա՛ է միակ կազմակերպւած յեղափոխական տարրը. որովհետև միակ նրա սիրտն է ամբողջովին կուտակւած խորին ատելութեամբ դէպի ցարերի, բիւրօկրատական, ստիկանական ու տէրտէրական ընթացիկ, ուր վախկոտ բուրժուազիան, ինքնարդէն շահագործող պրոլետարիատի, ուրայել է իր քաղաքացիական պատմական դերը. որովհետև լիք է քաղաքականապէս, լիք տնտեսապէս և լիք հասարակական ամեն երևոյթներում պրոլետարիատն է այսօր հանդիսանում միակ կրողն ամեն տնտեսականների, ամեն յոյսերի, ամեն ձգտումների դէպի լաւ պաղայ, դէպի փրկութիւն հարիւր-յիսուն միլիոն ժողովրդի։

Եւ պրոլետարիատն է այսօր, իբրև կազմակերպւած քաղաքական մարմին, ա՛յն միակ և ա՛

Հատոր արտոնողները որ կպիղծեն անհատական գործը, և վերջինիս բարձր գերբը, վերջին ջղաձգական բարձր զորութիւնը պահպանելու համար իր տեսիլի ու սպանիչ գոյութիւնը՝ փշուրէն և պրոլետարիատի յեղափոխական հաւատը զօրութեան ճնշման դէմ:

Գա՛ է կազմակերպւած պրոլետարիատի, Սօցիալ-Դեմոկրատիայի, գործնական գիրքն ու պատմական պայմանը ներկայումս Ռուսաստանում:

Մեր այս մի շարք յօդուածները հենց սկզբին յրեւած այն հարցին, թէ ինչո՞ւ բռնութեան ամբողջ ոյժերն այնքան կատաղութեամբ հալածու՞մ են պրոլետարիատին, առաջնապէս ու գրկաւորապէս պրոլետարիատին, այժմ՝ մենք տեխն. պատասխան իր հիմնական բացատրութիւններով: Եզրակացնենք այդ պատասխանը Երկու խօսքով: — Ռոլիզեմու Ռուսաստանում այսօր միայն և մի միայն պրոլետարիատ յասակարգն է, որ ընդունակ և կարող է կործանել ցարիզմը: Երբ ինչու ցարիզմն էլ առաջնապէս ու գրկաւորապէս այդ գաւազանի մէջն է տեսնում իր թշնամուն և իրա յաղթողին, յաղթութիւնն — մահ օրհասակա՞ն ցարիզմի և աւետարե՞ր — Համայն Ռուսաստանի բոլոր ժողովրդների համար:

**ԴԱՇՆԱԿԱՅԱԿԱՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ**  
III.  
Իսախանյանի ծրագրի եռերկր

Վերսկեցով մեր ընդհատուած յօդուածը, ստիպւած եմ գտնում ինձ ամենից առաջ անձնական երկու նկատողութիւն անել: Նախ՝ որ խիստ մասնաւոր և արտաքին՝ այս նկիւթի հետ ոչ մի առնչութիւն չունեցող հանգամանքների պատճառով եմ եղել ստիպւած այնչափ երկարել ընդհատումը, որի համար էլ ներսկեցովն պիտի խնդրեմ հետաքրքրուած ընթերցողից: Բայց այդ ընդհատման միջոցին մասնաւոր կերպով հասել է մեզ մի բանի ընթերցողների «կարծիքը»: Երբեք երկու խօսքով պատասխանել կայանում է մեր երկրորդ անձնական նկատողութիւնը, որ ամառից, որ այդպիսի մարդիկ գուցէ շատ գտնեն: Մարդիկ ասած են ինչու թէ մենք «Իսախանյանցականները կողմատու՞մ յօդուածներով հին դարման ենք քամում և, մասնաւոր լինելով «Թուրք հնչակեան» (որովհետեւ գրութիւնը լոյս է տեսնում հնչակեան մի թերթում), խնդրի վրայ պիտի նայեմ անշուշտ «կուսակցական» կողմակալ այնոցով, այսինքն երգեալ թշնամութեամբ և կաշառած խնամութեամբ: Կոյր պարտաւորութիւնով և հաւատարիմ խնկարկումներով... Թէ արդեօք մենք հին դարման ենք քամում թողնեմ բանիմաց ընթերցողների դատողութեան, ուզում եմ միայն ասել, որ «կուսակցականութեան» վրայ այդպիսի «կարծիք» կարող է կազմել միայն նա, որի միտքը կազմակերպուած է վարժապետից ժառանգած կուսակցութեան լոկ անունով և սահմանափակուած նոյն այդ կուսակցութեան շուկայական և

ընդհանուր դարձեալներով: Նա՛, որի կուսակցականութեան գաղափարը հասկացողութիւնը խիստ թիւր է և ևս խակ: Նա՛, որի «կարծիքը» կազմուած է ոչ թէ նկիւթի այսպէս ասած՝ բովանդակութեան միջոց, այլ սոսկ արտաքին ձևից: Մենք յարգում ենք ընդհանուր կուսակցականութեան սկզբունքը, երբ նա հիմնուած է ինչու իրերի ըմբռնման նմանութեան վրայ, այլ ոչ թէ անմիտ և սողայական կողմակալութեան և անհամբերութեան: Բայց և որոշակի շնչուած եմ, որ խնդրի վրայ նայում եմ առանց «թուրքի ի սակեան» լինելու և որս որոշակի ընդհանուրապէս մեր անկասկելի կրեյտ, այլ իմ աշխարհայեցողութեան և քաղաքական սկզբունքի լուրջաբով: Անցնենք ներքին:

Լայն գծերով նկարագրելով կովկասական յօդուածը քաղաքական այժմեան կացութիւնը և ընդդիմութիւնը այդ կացութեան մէջ առաջ եկող քաղաքական կուսակցութիւնների հիմնական յատկութիւնները, մենք կանգնել էինք այն հարցի գիծաց, թէ «հայ յեղափոխական Իսախանյանութիւնը» ինչ հոտ ու գոյն պիտի ունենայ կովկասում և այն կուսակցութիւններից որին պիտի յարէ նա: Այդ հարցերին պատասխանելու համար պէտք է նախ և առաջ պարզել նոյն կուսակցութեան էությունը: Իսկ դրա համար ուրիշ կրթութիւնը հունչնք, եթէ ոչ նրա ծրագրերը: Մինչև այժմ, որքան մեզ յայտնի է, «նոր գործունէութիւնը» նրա կողմից ոչ պաշտօնական յայտարարութեան է արժանացել, ոչ էլ նրա օրհաններին մէջ զբաղմունքի առարկայ դարձել: Ուստի ստիպւած ենք նրա ծրագրերն զննել և հասնել նրա հասարակական քաղաքական ընդհանուր սկզբունքները: Գուցէ մեզ ասեն, որ այդ ծրագրերը, որի հիման վրայ դատողութիւններ ենք ուզում անել այդ կուսակցութեան գիրքի և զբաղմունքի մասին կովկասում, ձևուած ու կտրուած է տաճկանայ «Անեխիյ» իրականութեան համաձայն, «կենսական» է միմիայն Տաճկանայաստանի համար: Ընդունում ենք, որ ծրագրի կազմողներին հայեացքը կենտրոնացած է միմիայն «մեր երկրի» վրայ, իսկ կովկասը թւր միջոցից առիտ հայ տարրով «մեր երկրի» չլինելով մի կողմից է նետուած, որ նրանց «նպատակն է անողորմ և անպարտ քրնադատութեան ենթարկել մեր կեանքին Անեխիյի մէջ գոյութիւն ունեցող պայմանները, մերկացնել բոլոր այն զուեքը, որոնց մէջ կը տանջուի մեր բազմաշարք ժողովուրդը, և հիմնուած ընդդիմութեան գիտութեան գրական օրէնքներու վրայ, պարզել այդ զուեքուն էական պատճառները և միայնակալ կատարողի կոնք. մէջ այդ զուեքը պատճառող ֆակտորները դէմ» («Ծրագիր», էջ 6): Առանց ուշադրութիւն դարձնելու ծրագրի այդ գեղեցիկ և խնամքով կուսակցութեան խոստումների արժողութեան վրայ, — որոնց կուսակցութիւնը իբր տասնամեայ գործունէութեան ընթացքում չի էլ փորձել ի կատար ածելու, որովհետեւ «քրնադական գիտութեան դրական օրէնքները» լոկ և մարկ խօսքեր են եղել մարդկանց աչքերի առջեւ ճօճելիս՝ առանց դրանց էական բովանդակութիւնը զլիւսում լուսաստի փայլելիս, — ուզում եմ միայն ասել, որ բազմազան կտրուած կարկարուած ծրագրերը թէև յարմարեցրած է Տաճկանայաստանի կեանքին, այնուամենայնիւ կարելի է նոյն այդ ծրագրից հանել կուսակցութեան էական ընդդիմութիւնը, քանի որ այդ ծրագրերը պարտաւորում է իբր մէջ ներածական մաս, ուր արտայայտուած են ծրագրի կազմողների հասարակա-

կան քաղաքական «գաւառութիւնը» — ներքուքիւն, ոչ թէ «դասնութիւնը», որովհետեւ դա՛ ըստ ծրագրի մի խելառ նկարագրի է «խտէլական հանրային կազմակերպութեան», այլ... «քրնադական գիտութեան գրական օրէնքները» ըմբռնումն Մեզ օգնութեան կհասնեն նաև արտայայտութիւններ, ուր արտացոլուած են քրնի կերպով ճնշած մտքի իսկական գոյնը: Թող չկարծել, թէ մենք ուզում ենք քրնադատութեան ենթարկել ամբողջ ծրագրերը, նրա թէօքիտիկական և գործնական արժողութիւնը տաճկանայական յեղափոխութեան տեսակետից: Մեր նպատակն է ծրագրի հիման վրայ մերկացնել կուսակցութիւնը և ներկայացնել նրան այնպէս, ինչպէս որ է նա էսպէս, հեռացնել նրա երեսից այն գոյնը, որն զիմակը, որով նա ուղեցել է, որ իբր ծրագրեր «կենսական ըլլալ» ոչ թէ միայն «մեր կեանքի Անեխիյ գրութեան» նկատմամբ, այլ և ժամանակակից հասարակային ճշտումներին, որպէս ծուղակ միայն մարդկանց որսալու: Եւ եթէ յաջողեց յոյց տալ ծրագրի բուժուական-իզօրոգիական լինելը, այն ժամանակ ըստ ինքեան պարզ կը լինի այդ կուսակցութեան տեղը կովկասեան քաղաքական կուսակցութիւնների շարքում: Երբովհետեւ հոգեբանօրէն և սօցիալ-քաղաքականօրէն անկարելի է մի տեղ բուժուական, միևս տեղն էլ պրոլետարական քաղաքականութիւն մղել:

Իրագրից վերը բերած կտորները ընդգծումները և հետեւեալ խորհրտայայտարարութիւնը, թէ «մենք ասպարէզ չենք ինչի իբրև այս կամ այն իւսօգիական (մտացածին) վարդապետութեան պատկառողներ» (6), պարզորոշ յոյց են տալիս, որ այդ կուսակցութեան քաղաքական սկզբունքն է իրական այժմեականութիւն, այն իմաստով, որ անձատու է պատմական մտքնորի անմիջական պահանջին միայն հայեացքը: Ծրագրերը թէև ճանաչողական է, որ ինքը տեղեակ է նրանում, թէ մարդկութիւնը բաժանուած է կեղեքողների և կեղեքողների: Գրեմք որ «խիտող զատակարարը միշտ կ'իյնան առիտ և առիտ թէ՛ ֆիզիքսիկ և թէ՛ բարոյապէս» (3), տեսնում է, թէ «ինչպէս աշխատանքը հետզհետէ ձևւոք կը ձգէ իր իրաւունքները» (3), մարդաբանութիւն է անուամբ համոզուած, որ կողմող տարրը «կը հասնի կատարելալ յաղթութեան, երբ կը վերանան աճի տեսակի դասակարգեր: Երբ աշխատանքը միջոցները և արդիւնքը կը դառնան աշխատանքի կատարելալ սեփականութիւնը, երբ մարդու կատարելութեան կը փոխարինէ իրենու կատարելութիւնը» (4), բայց... Բայց «պատմութեան դատն ու դաման դասերը ակնհայտ կ'երկարուի միմիայն միմիայն մայն, թէ մարդկութեան տանջուած մասին իր դատն վիճակը... բարեփոխելու բողոքը, գիտ և սա բաւական չեն յաղթանակը տանելու, թէ անից զատ առհարատեղ է ձևւոք բերել իրական ոյժ ալ, Բայց որովհետեւ այդ իրական ոյժը յանկարծակի չբոստեղծուի, որովհետեւ անիկա արդիւնք է գոյութիւն ունեցող պայմաններու և կը փոխուի այդ պայմաններուն փոփոխման համեմատ, ուզող պարզ է, թէ ոչ մէկ հանրային կազմակերպութիւն, որքան ալ իտէլական ըլլալ, մէկ անգամն անկարելի է իրականացնել, թէ այդ իտէլական կազմակերպութեան կարելի է հասնել միմիայն գոյութիւն ունեցող պայմանները բարեփոխելով» (5)... Պատասխանը աչքերով տեսնուող բողոքի ապացայի» և «գոյութիւն ունեցող

պայմաններ» անորոշ խօսքերով ներկուած «Անեխիյ գրութեան» միջև և զող այդ կուսակցութեան մէջն է անափիղը թաղուած պէտք էր միայն գրտնել նրան և պոչից բռնել, որ և «յաջողուել» է ծրագրի մեր «գիտական» հեղինակներին Պատմական փղի այդ որոնող կարծիք պոչը առնելու: Ըստ «Իրական ոյժ» է, որից ամուր կպիլ է նոր ծագող բուժուական իզօրոգիական տիգը: «Ահա ճիշտ այդ պատճառով, ասում են նրանք, չենք ձգտել մացնել մեր կեանքին մէջ այս կամ այն «գաւառութիւնը» հանդերձ իր «հանգամանակներով», մեր ժողովրդին չենք նկարագրեր այժմ այս կամ այն իտէլական հանրային կազմակերպութիւնը իր բոլոր մանրամասնութիւններով» (6), որովհետեւ այդ բոլորը «կենսական» չեն, այլ միմիայն «մտացածին» բաներ, չունեն «իրական ոյժ»...

Ս. Կասեան  
(Շարունակելի)

**ԿՈՎԿԱՍԵԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**  
VIII  
Գ Ի Ի Ղ Ե Ր Ո Ւ Մ  
Գ.

Գիւղական աշխարհակութեան վնասակար ցեցերի մէջ գլխաւոր տեղ է բռնում նաև գիւղական վաշխառուն: Հալար ու մի տեսակ ստոր խաբւրայութիւններով ձեռք բերած փոքրիկ կապիտալը նա արագութեամբ աճեցնում է՝ առանց այդ բանի վրայ իբր կողմից մի աննշան իսկ աշխատանք լծակելու: Ինչպէս որ ճանճը ընկնում է սարդի հիւսած ուտային մէջ և այնտեղ լսճճուած ու սարդի ճանկերում արնաքամ լինում, այնպէս էլ աչքաւ գիւղացին զանազան անտեսական անձուկ միջոցներով գրգռուած ընկնում է անտարբեր վաշխառուի ձեռքը, որի մուրհակների մէջ արնաքամ է լինում աստիճանաբար: Վաշխառուն բացարձակ աւազակ է, ամենայնպէս ու ճարպիկ գող: Մարդիկ խայտառակ օրէնքներն էլ նրա մտ ու շինչ են: Նրա նշանակած տուրանսը և բրբնն հասնում են մինչև 30—35, գուցէ և ուրիշ վայրերում աւելի: Այստեղ ամենալուբարար օգտուած է նա գիւղացու թշնամութիւնից ու սողիտութիւնից և իւր ճարպիկութեան բոլոր հնարները գործ է դնում իւր զուհին մի լաւ պոկելու համար:

Նա գիւղացուն տալիս է մի տարով 50 բուբլի՝ 15 բուբլի տուկտով և նրանից վերցնում մուրհակ, որի մէջ գրում է՝ այսինչը վերցրեց այսինչից 60 բուբլի մի տարի ժամանակով և 5 բուբլի տուկտով զմարդու պայմանով: Մի սերիչին տալիս է 15 բուբլի և 6 բուբլի և 5 բուբլի տուկտով ու գրում՝ տալիս եմ այսինչին 20 բուբլի պարտք և տակն էլ խոչը տառերով աւելացնում՝ դառնաց սովորեալ երրորդին տալիս է 100 բուբլի մի տարուց յետոյ 130 բուբլի ստանալու պայմանով: Գիւղացին անկարող է

լինում վճարել որոշեալ ժամանակին : Այդ դէպքում 130-ը գումարում է մայր գումար ու ըսկըսում նոր տոկոսների այլևս անվերջ շարքը : Այդ ձևով վախառուի գումարները զգալապէս մեծանում են : Իսկ ձախել է տալիս սրա եզը, նրա կողմը, ունեցած չունեցածը : Ահա այդ ճանապարհով նրա կապիտալը առաջադիմութեան հսկայական քայլեր է անում ու խոշորանում՝ իմաստաբար ու ազգատ բնակիչներին : Վախառուի համար այդ չափազանց բարեյաջող հանգամանքը իրեն հնարաւորութիւն է տալիս մեծացնել հարստահարութեան ասպարէզը, այն է՝ աւելի և աւելի շատ մարդկանց մտրհակով գրում տալ, ոգնութեան հասնել, գուրս գալով իւր գիւղի սահմաններից և մուտք գործելով և՛ հարեան գիւղերը : Իսկ գրանով լայնացնում է նաև իւր արագեւտութեան ու ազդեցութեան սահմանները : Ասում ենք տիրապետութեան, որովհետև այն բոլոր թշուառները, որոնք կարիքից զրոյացած սխալած են եղել վախառուի ոտ ու ձեռքն ընկնելու իրենց գրութիւնը ոչաւայնելու, երեսաներին ոչաց տալու համար, — կախած են իրենց յարարարից անտեսապէս նրա ազդեցութիւնը երևում է ազգատների ընտանեկան կեանքի բոլոր արեւոյթների վրայ : Իսկ իրեն մի տեսակ իրաւունք է համարում այդ գեթադներին կամ նրանց եղներին ծառայեցնել իւր արտերում, այդուհետ, տանը : Բայց այդ ծառայութիւնը վարձատրում է նա. — Մեծ մասամբ ոչ : Տուածն էլ համեմատած գործադրած աշխատանքի հետ մի աննշան բան է, այն էլ որուրս է գալիս տոկոսներից : Այդպիսով բազմաթիւ երիտասարդ սոցիալ աշխատում են վախառուի մօտ՝ գանէ տոկոսը վճարելու յոյսով : Տարիներ են անցնում, տոկոսները ոչ միայն չեն պակասում, ոչ միայն չեն հասնում ջղն պարտքին, այլ և տոկոս-տուկոսի վրայ է գալիս, եղածի վերայ բարդւում, խոշորանում : Բազմաթիւ ընտանեկաններ սոցիալի հարածներ են ստանում վախառուներից, քաջալուծում նաև այդ պատճառով և թողնելով տուն ու ընտանիք, հեռանում են օտար երկրներ՝ դէթ այդտեղ գրամ վաստակելու և պարտքը վճարելու յոյսով : Իսկ իրականանում է այդ յոյսը, նոր հարստահարիչների ճանկը չեն ընկնում : . . . Դրա մասին չէ այժմ, որ մենք խօսում ենք : Անցնում են տարիներ : Բազմանում է ազգատների թիւը, մեծանում է պարտքը, խոշորանում վախառուի կապիտալը :

Եւ ազգատութեան ու տգիտութեան մէջ թաղած գեթադք բնակիչները անկարող էին այդ բոլոր ոտնձգութիւնների և ծայրայեղ անիրաւութիւնների դէմ բողոքել : Այս բողոքը արդէն, սկսած է ու զօրեղանալու վրայ է, և մի փառաւոր օր այդ կարգի հարստահարիչներն էլ կըստանան իրենց արժանի պատիժը : Այդ պատժից բաժին կը հասնէ նաև գործակալ քահանայ կոչւած սեահոգի տղուկին, որը իւր վիճակի բարձր գիւղերի համար մի կատարեալ աւաղակ-հրէշ է :

Ռաբի զանիրաւութիւնների դէմ բողոքել : Այս բողոքը արդէն, սկսած է ու զօրեղանալու վրայ է, և մի փառաւոր օր այդ կարգի հարստահարիչներն էլ կըստանան իրենց արժանի պատիժը : Այդ պատժից բաժին կը հասնէ նաև գործակալ քահանայ կոչւած սեահոգի տղուկին, որը իւր վիճակի բարձր գիւղերի համար մի կատարեալ աւաղակ-հրէշ է :

Բազում Անիրաւ

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԷՆ

28 ապրիլ 1904 թ. .

Անուրանալի է, որ ներկայումս պահպանողական և բողոքող հոսանքին կից կայ մի երրորդ հոսանք, որը գեթ ոչ լինելով իսկ Ռուսաստանի ներկայ միակողմանի կարգերից, միևնոյն ժամանակ չէ հաւատում կամ գեթարանում է հաւատալ, որ իրերի գրութիւնն այդ պետութեան մէջ երբ և իցէ կարող է փոփոխել : և չհաւատալով այդ փոփոխութեան այդ չհաւատացողները մնում են լուռ և իրանց շարքերով կալմում են մի նոր մասսա, որին կարելի է ոչաշտուղ անունը տալ :

Այդ հոսանքի մի ստուար մասը կայ և մեր քաղաքում : Մինչդեռ ներկայումս աւելի քան ժամանակն է, որ այս հաշտուող հոսանքը յարէ բողոքողներին և սրանով ստարացնէ զըրանց բանակը : Հաշտուող հոսանքի երևալը հոգեբանօրէն կարելի է բացատրել նրանով, որ նրանց համար դեռ մնում է իրերի ճշգրիտ գրութիւնը : Սեղափոխական թերթերի նպատակը պէտք է լինի ամեն կերպ պարզել երևոյթները, և այն ժամանակ տատանողները կանցնեն բողոքողների շարքը : Այդ նպատակով անցեալ անգամ (Վերած. թ. 39) փաստերով ապացուցինք, որ Ռուսաստանը ներկայումս եւրոպական պետութիւնների մէջ ամենաթուլըն է, չնայելով որ զօրքի թիւը հասնում է միլիոնների : Եւ ինչպէս երևում է, մենք չենք սըխալւած, ներկայ պատերազմի դաշտում կրած շարունակ պարտութիւնները ուրիշ ոչինչ չեն ապացուցանում, եթէ ոչ մեր ասածները :

Այս անգամ կը կամենայինք ցոյց տալ տատանողներին, որ նրանց երկիւղը չունի ոչ մի պատճառական հիմք և թէ Ռուսաստանի իրերի երեւող գրութիւնը, որը նկատում ենք ներկայումս, պատճառական որոշ ընթացքի հետեւանք է :

Պէտք է իմանալ, որ սահմանադրութիւնը կամ հասարակապետութիւնը իսկոյն չէ երեան գալիս, դրա համար հարկաւոր են տարիներ, նոյն իսկ դարեր, իսկ մինչև այդ՝ երկրի գլխով պիտի գան և գնան տատանող տարիներ : Դրա պատճառն այն է, որ ամեն մի միապետական

րէժիմ իր գոյութիւնը պահպանում է մինչև այն ժամանակ, երբ երկիրը շարունակում է խարխուփել տնտեսական և հասարակական զարգացման ստոր աստիճանի վրայ : և որովհետև այդ զարգացումը առաջ է գալիս ո՛չ թէ յանկարծ, այլ աստիճանաբար, ուստի՞ և այդպիսի երկրի կառավարական ղեկավարները և վերջնական փոփոխութեան վրայ հասնելը ենթարկւում է տատանումների : Պատահում է որ ժողովրդի միտքը արտայայտում է իր պահանջը, բայց պատահում է որ սրա վրա գալիս է բէակցիա : Միապետական կառավարութիւնը ժողովրդի մտքի պահանջի առաջ ոտիպւած է լինում իհարկէ զիջել : այդ անում է նրա համար, որ իր դիրքը պահէ իր նախկին գրութեան վրայ : բայց յետոյ հէնց իկատեց, որ ազգաբնակչութիւնը թուլացել է և այլ ևս իր պահանջները չէ պնդում, միապետութիւնն իսկոյն սկսում է իր առաջը յետ խլել, որպէսզի թեթեւ զիջումը առիթ չտայ աւելին պահանջելու :

Եւրոպական պետութիւններից օրինակ բերենք Գերմանիան : Անցեալ դարի սկզբում Գերմանիան գտնուում էր տնտեսական և հասարակական զարգացման ըստոր աստիճանի վրայ : Պրանսիական Յուլիսեան դէպքերից և 1830 թ. Բէլգիայի շարժումներից յետոյ Գերմանիան սթափւեց և մի քանի գաւառներում հասարակութիւնը շարժումների միջոցով ձեռք բերեց թոյլ ուրուագծով սահմանադրութիւն : Իսկոյն առաջ եկաւ առաջադիմական և ռաւկաւարական մամուլ, — սական այդ ժողովրդական յաղթութիւնները, նոյն իսկ երկրորդ փորձից յետոյ, երկար շտեկներու կառավարութիւնը շուտով սթափւեց և սկսեց աջ ու ձախ վերջ տալ ամեն մի ազատական շարժման : Բանտերը լցեցին բողոքողներով, բռնեցին նոյն իսկ թեթեւ կոսակածանքի ենթարկւածները : Բայց . . . սթափւեց բուրժուազիան, օրորներով իր կողմը գրաւեց բանտերների համակրութիւնը, և վրայ հասաւ սահմանադրութիւնը :

Իոյն երևոյթը նկատում է նաև Ռուսաստանում : Այդպէս, երբ Սեաստապօլեան խայտառակ պարտութիւնը (1855 թ.) ապացուցեց այդ երկրի տնտեսական և քաղաքական յետամնացութիւնը, ցարի կառավարութիւնը, վախենալով ժողովրդական ցոյցերից՝ իսկոյն մի շարք բարենորոգումներով և զիջումներով խաղաղեցրեց մտքերը : Տգէտ ամբողջ այդ զիջումները հալած իւրի տեղ ընդունեց և հաւատաց, որ կայսերական կառավարութիւնը իր նախաձեռնութիւնով և զգաբնակչութեան հոգը տանելու միտումից է տեւել ճորտերի ազատութիւնը և միւս մի շարք

բարենորոգումները : Սակայն չանցան մի քանի տարիներ, ցարի կառավարութիւնը մէկ-մէկու ետեից սկսեց խլել նախկին արտոնութիւնները և ներկայումս 60-կան թուականների զիջած բարենորոգումներից ստուեր է միայն մնացել :

Այդպիսի տատանումները տեղի են ունենում մինչև այն ժամանակ, երբ, ինչպէս վերնասացինք, ազգաբնակչութեան անտեսական կեանքի մէջ խոշոր փոփոխութիւնները հասարակական գիտակցութեան շտան կարեւոր գիմացկունութիւն և իրերի անխուսափելիութիւն : Եւ միապետութեան մէջ առաջ եկած այդպիսի տատանումները ապացոյց են, որ միապետութիւնն իր անկման մօտեցել է արդէն :

Սակայն ներկայումս մօտեցել է Ռուսաստանի այդ ժամանակը : — Անպայման :

Բոլոր երևոյթներն և պատճառական հոսանքը ապացուցում են, որ շատ մօտապագայում մենք Ռուսաստանում կարող ենք տեսնել սահմանադրութիւն :

Երևոյթները : Ահա :

Ներկայումս, չնայելով որ Ռուսաստանի ազգաբնակչութեան մեծամասնութեան բարեկեցութիւնը կախում ունի երկրագործութիւնից, սակայն պատմական անխուսափելի ընթացքը Ռուսաստանում արդիւնաբերական զարգացում է արգէն առաջ բերել : Ընդհատ է, Ռուսաստանում դեռ չէ նկատուում այդ զարգացումը այն արարգութիւնով, ինչպիսին տեղի ունի արևմտեան Եւրոպայում կամ Ամերիկայում, բայց և այնպէս նա առաջ է գնում մի զարմանալի արագութիւնով, մանաւանդ վերջին տասնեակ տարիները : Կապիտալիստական արդիւնաբերութիւնն այդէն հարթում է իր ճանապարհը և ոչնչացնում է իր առաջ եկած խոչընդոտները : Իսկ այդ արդիւնաբերութիւնն, ինչպէս յայտնի է, պահանջում է ազատ մրցում, խոշոր կապիտալ, բանտերների հոսանք, ազատ փոխանակութիւն, ճանապարհների արագ և էժան հաղորդակցութիւն, այդ պատճառով կամայակամայ երկիրը պէտք է ստեղծէ այդ յարմարութիւնները, հակառակ դէպքում նա կը մատնի յետամնացութեան կամ կենթարկուի ստրկական գրութեան, ինչպէս ներկայումս կորէան : Իսկ լայն ազատութիւնը և արտոնութիւնները ձեռնտու չեն միապետութեան համար, որովհետև եթէ նա տայ այդ ազատութիւնը, պէտք է ընդունէ իր յօժար կամքով սահմանադրութիւն, ինչպէս այդ տեղի է ունեցել Եւրոպայում : Սակայն Եւրոպայի օրինակին հետևողներ գրեթէ չեն եղել : միապետութիւնն ամեն տեղ գիմագրի է հոսանքին և այդ պատճառով ըստիպւած է եղել առաջ բերել ար-

